Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

« Հաշվեքննիչ պալատի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին

օրենքի նախագծի (Պ-703-04.08.2020-ՖՎ-011/0, հեղինակ՝ Եղիշե Սողոմոնյան) վերաբերյալ արված բանավոր առաջարկների

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1.	ԱԺ պատգամավոր՝ Եղիշե Սողոմոնյան	վերնագիր	վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ. **«ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**		Ընդունվել է:
2.	ԱԺ պատգամավոր՝ Եղիշե Սողոմոնյան	Նախագծի 1-ին հոդված	1-ին հոդվածը ուժը կորցրած ճանաչել		Ընդունվել է:
3.	ԱԺ պատգամավոր՝ Եղիշե Սողոմոնյան	Նախագծի 2-րդ հոդված	2-րդ հոդվածը վերանվանել հոդված 1-ին և շարադրել նոր խմբագրությամբ. «***Հոդված 1.*** Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ «1.Հաշվեքննիչ պալատի անդամ, ներառյալ՝ պալատի նախագահ, կարող է ընտրվել Ազգային ժողովի պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող, բարձրագույն կրթություն ունեցող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ		Ընդունվել է:

			սահմանված կարգով աուդիտորի որակավորում ունեցող այն քաղաքացին, ով ունի աուդիտորի նվազագույնը հինգ տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող իրավաբանական անձի ղեկավար պաշտոնի աշխատանքային ստաժ կամ հաշվեքննիչ պալատում ղեկավար պաշտոններում նվազագույնը հինգ տարվա աշխատանքային ստաժ կամ ֆինանսական ոլորտում նվազագույնը տասը տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն հինգ տարին՝ ղեկավարի պաշտոնում:»:		
4.	ԱԺ պատգամավոր՝ Եղիշե Սողոմոնյան	Նախագծի 3-րդ հոդված	3-րդ հոդվածը վերանվանել հոդված 2-րդ և շարադրել նոր խմբագրությամբ. «***Հոդված 2.*** Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ «2.Հաշվեքննիչ պալատի անդամի պաշտոնավարման ժամկետը լրանալուց երեք ամիս առաջ հաշվեքննիչ պալատի նախագահն այդ մասին տեղեկացնում է Ազգային ժողովին: Հաշվեքննիչ պալատի անդամի վաղաժամկետ թափուր տեղ առաջանալու դեպքում հաշվեքննիչ պալատի նախագահն այդ մասին հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Ազգային ժողովին:»:		Ընդունվել է:

5.	ԱԺ պատգամավոր՝ Եղիշե Սողոմոնյան	Նախագծի 4-րդ հոդված	4-րդ հոդվածը վերանվանել հոդված 3-րդ և շարադրել նոր խմբագրությամբ. «***Հոդված 3***. Օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ «6.Հաշվեքննության առաջադրանքում նշված օբյեկտում զննման և դիտարկման ընթացակարգի իրականացման ժամկետը սահմանվում է մինչև 24 աշխատանքային օր, որը հաշվեքննության ընթացքում կարող է երկարաձգվել ոչ ավելի, քան 24 աշխատանքային օրով՝ հաշվեքննիչ պալատի որոշմամբ:»:		Ընդունվել է:
6.	ԱԺ պատգամավոր՝ Եղիշե Սողոմոնյան	Նախագծի 5-րդ հոդված	5-րդ հոդվածը վերանվանել հոդված 4-րդ և շարադրել նոր խմբագրությամբ. «***Հոդված 4.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:»:		Ընդունվել է: